

ԱՄՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄՈՒՄ

### ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի Հայ Ուսուցիչներու տարեկան գիտաժողովը տեղի ունեցաւ Նիւ Եորքի Առաջնորդարանի կեդրոնին մէջ՝ Յուլիս 16-23 օրերուն:

Այս տարի թեմի ծուխերէն 14 ուսուցիչներ կը մասնակցէին տարեկան այս գիտաժողովին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի համալիրին մէջ: Մասնակցող ուսուցիչներուն ներկայացուեցան Հայերէն լեզուի եւ մշակոյթի ուսուցման սկզբունքները, ինչպէս նաեւ դասապատրաստութեան ծրագրում, դասարանի մէջ կարգապահութիւն, ուսուցչին վարուելակերպը, ուսուցման նոր մեթոտներ եւ Հայերէնի ուսուցումը՝ որպէս երկրորդ լեզու: Այս հաւաքին նպատակն էր ուսուցիչներուն տրամադրելի դարձնել այն միջոցները, որոնցմով անոնք նոր սերունդը պիտի դաստիարակէին:

Առաջնորդարանի անձնակազմէն՝ խմբավար Խորեն Մէլիսանճեանի եւ Կիլտա Պէքքեանի կողքին՝ հետեւեալ դասախօսները իրենց մասնակցութիւնը բերին. Պրոֆ. Սեդա Տատոյեան, Դոկտ. Սոկրատ Պօյաճեան, Դոկտ. Մէրի Շամշոյեան-Օլսըն, Հոգշ. Տ. Վահան Ժ. Վրդ. Յովհաննէսեան, Արժշ. Տ. Ընծակ ա. քինյ. Նալպանտեան, Պրոֆ. Ճէյմս Քութերլաքոս, Դոկտ. Ճէյմս Ճէյքըպսըն, Տաթի Պենկոյեան, Յարութ Մըսըրլեան, Յովսէփ Մելքոնեան, Լուսին Գասպարեան, Ֆլորանս Աւագեան, Սուզըն Խրիմեան-Քըրպի, Վիքի Խըրլոբեան, Ջարմինէ Պօղոսեան, Յովհաննէս Խոստեղեան, Սեդա Ճէպճեան, Սարո Փարթամեան եւ Արթուր Համալեան: «»

Գիտաժողովի եւ մասնակցող ուսուցիչներուն մասին ակնարկելով Առաջնորդարանի Հայկական Ուսման Բաժանմունքի համակարգող Կիլտա Պէքքեան ըսաւ. «Մեր ծուխերու դպրոցները ոչ միայն ունին լաւ ուսուցիչներ, որոնք նուիրուած են իրենց աշխատանքին, այլ նաեւ անոնք պատրաստ են զարգացնելու իրենց կարողութիւնները: Այս յայտագիրով կը ջանանք դասախօսներ հրաւիրել՝ որոնք ծուխերու տեղական դաստիարակները յուզող հարցերու մասին լուսաբանութիւններ եւ խորհուրդներ կու տան: Եթէ մենք կարենանք անոնց տրամադրելի դարձնել իրենց աշխատանքը բարելաւելու միջոցները, անոնք աւելի արդիւնաւետ կերպով պիտի փոխանցեն մեր հայկական մշակոյթը յաջորդ սերունդներուն»:

Ութըրթաունի (Մասսաչուսէց) Ս. Յակոբ Եկեղեցւոյ ուսուցչուհի Այտա Աստղիկ Սարգիսեան այս հաւաքին մասին հետեւեալ արտայայտութիւնը ունեցաւ. «Շնորհակալութիւն կը յայտնեմ դասախօսներուն, որոնք մեզի ծանօթացուցին ուսուցման նոր մեթոտները եւ մեր գիտութիւնն ու կրթական իմացութիւնը ճոխացուցին: Մեզ ներշնչեցին, եւ մենք նոր եռանդով ու խանդով պիտի շարունակենք մեր գործը»:

Պրքա Ռաթոնի (Ֆլորիտա) Ս. Դաւիթ Եկեղեցւոյ ուսուցչուհի Շաքէ Փոթութեանը ըսաւ. «Ներշնչող շաբաթ մը եղաւ ինձի համար: Նորութիւններու տեղեկացայ իմ ազ-

զային ժառանգութեան մասին, եւ որոնցմով զօրացած պիտի վերադառնամ եւ զանոնք պիտի փոխանցեմ իմ աշակերտներու»:

Գիտաժողովին մասնակիցները հանդիպում մը ունեցան Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի հետ, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Կը գնահատեմ Հայկական մշակոյթի մասին ձեր գիտութիւնն ու ծանօթութիւնը աւելի զարգացնելու ձեր փափաքն ու ցանկութիւնը: Ուրախ եմ, որ ձեր ժամանակն ու կարողութիւնները ի սպաս կը դնէք Հայ մանուկներու դաստիարակութեան ի նպաստ: Մեր հոգեւոր, ազգային եւ մշակութային ժառանգութիւնը մեքենաբար չի փոխանցուիր. որպէս ուսուցիչներ՝ դուք էք, որ այս ոգին պիտի ներարկէք մոր սերունդին միտքին, սիրտին մէջ: Դուք կեանք պիտի տաք մեր լեզուին, հաւատքին, պատմութեան եւ աւանդութիւններուն»:

Գիտաժողովի աւարտին՝ մասնակցող ուսուցիչները շաբթուան ընթացքին իրենց ներկայացուած նիւթերէն մէկուն մասին, բոլորին ներկայութեան, դասաւանդութիւն մը կատարեցին: Իսկ Կիրակի, Յուլիս 23, յաւարտ Ս. Պատարագի, տեղի ունեցաւ վկայականաց բաշխումը՝ Ս. Վարդան Մայր Տաճարի լուսարարապետ Արժշ. Տ. Մարտիրոս քինյ. Չեւեանի մասնակցութեամբ:

*ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*